ՀԱՎԱՏՔՈՎ ՔԱՅԼԵՑ ԱՍՏԾՈ ՀԵՏ
ԾՆՆԴ. 5:21-24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ենովքը ապրեց 365 տարի ու մահացավ: Նա քայլեց հավատքով ամեն օր: Նա Ճանաչված էր որպես հավատքի մարդ: Տարին ունի 365 օր և Աստուն հաճելի է այն անձը ով հավատքով հավատքով քայլում ամեն օր Աստծո հետ:

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(Ծննդ. Եբր. 11:5-6)

Հաւատո՛վ Ենոքը փոխադրուեց երկինք, որպէսզի մահ չճաշակի. եւ նա ոչ մի տեղ չգտնուեց, քանի որ Աստուած նրան տարել էր: **Եւ նախքան իր տարուելը, նրան վկայութիւն էր տրուել, որ ինքը հաճելի էր Աստծուն:** 6 Բայց առանց հաւատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ նա, ով մօտենում է Աստծուն, պէտք է հաւատայ, որ Աստուած կայ եւ վարձահատոյց է լինում նրանց, ովքեր փնտռում են իրեն:

Ծննդ. 5:21-24 - 21 Եւ Ենովքը վաթսունեւհինգ տարի ապրեց, եւ ծնեց Մաթուսաղային: 22 **Եւ Ենովքն Աստուծոյ հետ վարուեցաւ (քայլեց Then Enoch walked with God)** Մաթուսաղային ծնելուց հետոյ երեք հարիւր տարի, եւ տղերք եւ աղջկերք ծնեց: 23 Եւ Ենովքի բոլոր օրերը երեք հարիւր վաթսունեւհինգ տարի եղաւ: 24 **Եւ Ենովք Աստուծոյ հետ վարուեցաւ (քայլեց),** եւ չէր **գտնվում**, որովհետեւ Աստուած առաւ նորան:

1. ԵՆՈՎՔԸ ՀԱՃԵԼԻ ԷՐ ԱՍՏԾՈՒՆ ՈՐՈՎՀԵՏԵՒ ՆԱ ՀԱՎԱՏՔՈՎ ՔԱՅԼԵՑ ԱՍՏԾՈ ՀԵՏ: (ԾՆՆԴՈՑ 6:9 ՆՈՅԸ ՔԱՅԼԵՑ ԱՍՏԾՈ ՀԵՏ):

- **Իսկ Ի՞նչ է նշանակում հավատքով քայլել Աստծու հետ.**
  - **Առաջին հերթին, դա նշանակում է, որ Ենովքը ընտրություն կատարեց:**
  - **Երկրորդ հերթին, նրա ընտրությունները հաճելի էր Աստծուն:**
    - **2 Կոր. 5:7-8 - Որովհետեւ հաւատքով ենք քայլում, եւ ոչ թէ երեւոյթով: 8 Բայց վստահ ենք եւ աւելի ընտրում ենք այս մարմնիցը դուրս գնալ՝ եւ Տիրոջ մօտ մտնել:**
  - Եբր. 11:1-3 - Հաւատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ եւ չերեւեցող բաների ապացոյցն է: 2 Որովհետեւ նորանով առաջինները վկայութիւն ընդունեցին: 3 Հաւատքով ենք իմանում, որ աշխարհքներն Աստուծոյ խօսքովը հաստատուեցան, որ չերեւողներիցն այս տեսնուողներս եղած են:

- Արդյոք ձեր հաւատքը հաճելի է Աստծուն. Արդյոք ձեր ընտրությունը հաճելի է Աստծուն. Կանգ առ մի պահ և մտածի այտ մասին:

2. ԵՆՈՎՔԸ ՍՏԱՑԱՎ ԵՐԿՈՒ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

- **Իր տղայի ծնունդը որպես վերջին օրերի նշան.** (”his death shall bring judgment”)
- **Աշխարհի կործանումը ջրհեղեղով և Քրիստոսի երկրորդ գալուստյան մասին:**
  - Հուդա 1:14-15 - Ենովքն էլ, որ եօթներորդն է Ադամից, սորանց համար մարգարէացաւ եւ ասեց. Ահա Տէրը եկաւ իր բիւրաւոր **սուրբերով (1 Թես. 3:13),** 15 Որ դատաստան անէ ամենին, եւ նորանց ամբարիշտներին յանդիմանէ իրանց արած բոլոր ամբարիշտ գործերի համար, եւ բոլոր այն խիստ խօսքերի համար, որ ամբարիշտ մեղավորները նորա դէմ խօսեցին:
  - **Այս խոսքերը շատ մեծ ազդեծություն են թողել Նոյի կյանքում:**
  - Եբր. 11:7 - Հաւատքով Նոյը պատգամ առնելով դեռ չերեւացած բաների համար եւ երկիւղած լինելով շինեց տապանը իր տան փրկութեան համար, որով աշխարհքիս դատապարտեց. **եւ ժառանգ եղաւ հաւատքով լինող արդարութեանը:**

Ամփոփում

- Հավատքը ժառանգություն է սըրունդից սերունդ: Ի՞սկ ինչենք փոխանցում գալիք սերունդին: Ո՞վ գիտի միգուց է մենք ենք այն վերջին սերունդը: